ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 36-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22 -Ի ԹԻՎ 07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով, համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 22-ի ավագանու թիվ 07 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ բովանդակությամբ՝

1/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի տեղական տուրք և /կամ/ վճար վճարողների գրանցամատյանների վարման կարգը հաստատելու և համայնքի ավագանու 30.10.2020 թվականի N 83-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

2/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը սահմանելու մասին:

3/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքում աղբահանության իրականացման կարգը սահմանելու մասին:

4/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին:

5/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու անդամներ՝ Մացակ Անդրանիկի Սողոմոնյանի և Գևորգ Սմբատի Հովհաննիսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

6/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Վարդաբլուր բնակավայրի հանդիսությունների սրահի համար սպասք ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու մասին:

7/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի հաղորդումը 2022 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

8/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից բյուջեի ֆոնդային մաս հատկացում կատարելու մասին:

9/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում հողամասերը վարձակալության և / կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցույթային հանձնաժողով ստեղծելու մասին:

10/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության տրամադրելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

11/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը անդամակցության հայտ ներկայացնելու համար լիազորելու մասին:

ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կարիքների համար տեսահսկման սարքեր և գդանշանային համակարգեր ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՀՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 37-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ / ԿԱՄ/ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.10.2020 ԹՎԱԿԱՆԻ N 83-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի ,«Նորմատիվ իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է**

1.Ծաղկահովիտ համայնքում տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարել փաստաթղթային կարգով:
2.Հաստատել Ծաղկահովիտ համայնքի՝
ա. տեղական տուրք վճարողների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N1 հավելվածի,
բ. տեղական վճար վճարողների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N2 հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկահովիտ համայնքի ավագանու 30.10.2020 թվականի N 83-Ն որոշումը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված թիվ 1
Արագածոտնի մարզի
Ծաղկահովիտ համայնքի ավագանու
2022 թվականի հուլիսի 22-ի թիվ 37 որոշման

Ձև N 1

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ

ՀՀ	Վճարողի			Տեղական տուրքի տեսակը	Շինության		Ծանուցման		Հայտի ներկայացման ամսաթիվը	Վճարման		Համայնքի ղեկավարի որոշման		Թույլտվության		
	անուն, ազգանունը / իրավաբանական անձի անվանումը	ՀՎՀՀ / անձը հաստատող փաստաթղթի համարը	գործունեության իրականացման վայրի հասցեն		տեսակը	մակերեսը	N	ամսաթիվը		ամսաթիվը	գումարը (դրամ)	N	ամսաթիվը	N	ամսաթիվը	ժամանակահատվածը

Ծաղկահովիտ համայնքի ղեկավար՝ Ն.Հակոբյան

Հավելված թիվ 2
Արագածոտնի մարզի
Ծաղկահովիտ համայնքի ավագանու
2022 թվականի հուլիսի 22-ի թիվ 37 որոշման

Ձև N 2

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ

ՀՀ	Վճարողի			Տեղական վճարի տեսակը	Պայմանագրի / որոշման		Վճարման	
	անուն, ազգանունը / իրավաբանական անձի անվանումը	ՀՎՀՀ / անձը հաստատող փաստաթղթի համարը	գործունեության իրականացման վայրի հասցեն		N	ամսաթիվը	ամսաթիվը	գումարը (դրամ)

Ծաղկահովիտ համայնքի ղեկավար՝ Ն.Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 38-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՆՈՐԱՅԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ**

Հավելված
Ծաղկահովիտ համայնքի ավագանու
2022 թվականի հուլիսի 22-ի N 38-Ն որոշման

ԿԱՐԳ
ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ (ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ)

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:
2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի (տեղական վճարի) դրույքաչափերը սահմանելու մասին Ծաղկահովիտ համայնքի ավագանու որոշումը:
3. Սույն Կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

4. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:
5. Ծաղկահովիտ համայնքի ավագանին կարող է սահմանել աղբահանության վճարի (տեղական վճար) արտոնություններ առանձին կատեգորիայի անձանց համար:
6. Աղբահանության վճար վճարողների հաշվառումն իրականացվում է համապատասխան համակարգչային ծրագրով (այսուհետ Ծրագիր):
7. Աղբահանության վճար վճարողների հաշվառումն իրականացվում է Ծաղկահովիտ համայնքապետարանի կողմից շահագործվող Ծրագրով, իսկ Ծրագրում տվյալների մուտքագրումը կատարվում է Բյուրեղավան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված համայնքային աղբահանության ծառայություններ մատուցող կազմակերպության (այսուհետ Օպերատոր) աշխատակիցը:

III. Աղբահանության վճարի հաշվարկումը

8. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով Ծաղկահովիտ համայնքի ավագանու կողմից սահմանված աղբահանության վճարի (կենցաղային, ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար) դրույքաչափերից :

IV. Աղբահանության վճարի գանձումը (մուտքագրումը)

9. Աղբահանության վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե իրականացվում է Ծաղկահովիտ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված Օպերատորի կողմից, այսուհետ՝ Գանձող:

10.Գանձողը ստանում է Ծաղկահովիտ համայնքապետարանի կողմից տրամադրված՝ աղբահանության վճարի կանխիկ գանձման համար նախատեսված անդորրագրերը, որի համար Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի կողմից լիազորված մարմնի (այսուհետ՝ Համակարգող) և Գանձողի միջև կնքվում է անդորրագրերի հանձման և ընդունման արձանագրություն:

11. Համակարգողն իրականացնում է Գանձողի կողմից գանձված անդորրագրերի ընթացիկ հաշվառման, համադրման, անդորրագրերի մնացորդների և հայտի դեպքում անդորրագրերի նոր խմբաքանակների տրամադրման աշխատանքները:

12.Գանձողը, Համակարգողից ստանալով անդորրագրերը, իրականացնում է անդորրագրերի պահպանման և ընթացիկ հաշվառման այլ աշխատանքներ:

13. Գանձողը պարտավոր է գանձված գումարը բանկային կամ փոստային համակարգի միջոցով փոխանցել համապատասխան հաշվին՝ կանխիկ դրամի հավաքման պահից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Օպերատորի աշխատակիցը՝ մինչև հսկիչ-հավաքագրողներից անդորրագրերի ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը պետք է անդորրագրերի տվյալները մուտքագրի Ծրագիր:

Գանձված անդորրագրերի երկրորդ օրինակը՝ համապատասխան ամփոփագրով, Գանձողը պարտավոր է հանձնել Համակարգողին՝ մինչև գանձված գումարի փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

14. Ծաղկահովիտ համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության վճարի գանձման (մուտքագրման) լիազորություններով օժտված Օպերատորը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իր կողմից աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

V. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

15. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

16. Աղբահանության վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

VI. Այլ դրույթներ

17. Աղբահանության վճարի անդորրագրերի հանձման և ընդունման արձանագրության, կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, աղբահանության վճարի գանձման (մուտքագրման) գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 39-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքում աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն 1, 2 և 3 հավելվածների :
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՆՈՐԱՀԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ**

Հավելված N 1
Ծաղկահովիտ համայնքի ավագանու
2022 թվականի հուլիսի 22– ի N 39 –Ն որոշման

ԿԱՐԳ
ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆՈՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Ծաղկահովիտ համայնքի վարչական տարածքում աղբահանության աշխատանքների իրականացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգի գործողությունը տարածվում է համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձանց (ներառյալ անհատ ձեռնարկատեր և արտոնագրային վճար վճարող) իրավաբանական անձանց, հիմնարկների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կան անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալի, անհատույց օգտագործողի վրա:
3. Աղբահանությունը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանք է՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:
4. Աղբահանությունը վճարովի է:
5. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբ առաջացողները ազատվում են աղբահանության վճարից, եթե աղբը փոխադրում և տեղափոխում են սեփական միջոցներով՝ համապատասխան թույլտվության հիման վրա:
6. Համայնքի ավագանին կարող է սահմանել աղբահանության վճարի արտոնություններ առանձին կատեգորիայի անձանց համար: Համայնքի ավագանու կողմից անհատական արտոնություններ սահմանելն արգելվում է:
7. Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման ժամանակ անհրաժեշտ է՝
1) նվազեցնել և չեզոքացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի վտանգավոր ներգործությունը,
2) ապահովել բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ,
3) աղբի փոխադրման իրականացումը կազմակերպել՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը,
4) ապահովել աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը և հանրային իրազեկվածությունը:

II. ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ, ՊԱՀՄԱՆ , ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ

8. Կենցաղային աղբը հավաքվում և (կամ) պահվում է այդ նպատակով նախատեսված տեղերում, աղբամաններում, աղբախցերում :

9. Աղբամանները տեղադրվում են բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս, քան 15 մ և ոչ ավելի, քան 100մ հեռավորության վրա: Պուրակներում, զբոսայգիներում աղբամանները տեղադրվում են մարդկանց զանգվածային կուտակման վայրերից ոչ պակաս, քան 50 մ հեռավորության վրա:

10. Հանգստի գոտիներում աղբամանները տեղադրվում են 3500 - 4000քմ մակերեսին 1 աղբաման հաշվարկով:

11. Աղբամանները տեղադրվում են բնակելի և հասարակական շենքերի բակային կամ միջբակային տարածքներում՝ փոխադրամիջոցների մոտեցման համար հարմար դիրքով: Աղբամանները չեն տեղադրվում փողոցների մայթերի և սիզամարգերի վրա:

12. Աղբամանները աղբով լցվում են ծավալի 2/3 –ից ոչ ավելի մակարդակով:

13. Աղբահանությունը իրականացնում են մասնագիտացված և (կամ) օրենքով չարգելված այլ կազմակերպություններ:

14. Կոնտեյներներից աղբը հեռացնելու ժամանակ աղբահանությունն իրականացնող կազմակերպության կողմից մաքրվում և տեղափոխվում է կոնտեյներների հարակից տարածքի աղբը: Աղբահանության ժամանակ տեղափոխվում են նաև աղբակույտերը և տերևակույտերը:

15. Աղբատար փոխադրամիջոցների թափքերը ախտահանվում են աղբաթափման վայրում՝ աղբահանությունն իրականացնող կազմակերպության կողմից՝ ախտահանիչ լուծույթներով:

16. Աղբահավաք կոնտեյներները լվացվում և ախտահանվում են առնվազն ամիսը մեկ անգամ աղբահանությունն իրականացնող կազմակերպության կողմից:

17. Աղբամանները տեղադրվում են ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, առևտուր իրականացնող օբյեկտների մուտքերի մոտ, զբոսայգիներում, պուրակներում, շուկաներում և այլն:

18. Կրպակներում առևտուր իրականացնող սուբյեկտները իրենց հարակից տարածքները պահում են պատշաճ սանիտարական վիճակում:

19. Բնակելի շենքերի առաջին հարկերում տեղակայված առևտրի և սպասարկման օբյեկտների մուտքերի հարակից տարածքները պահվում են պատշաճ սանիտարական վիճակում, չեն կուտակում ապրանքների արկղեր կամ ավելորդ իրեր, սպառման թափոններ և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոններ:

20. Աղբը տեղադրվում է գործող աղբավայրում:

21. Չի թույլատրվում՝

1) աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում,
2) սպառման թափոնների այրումը,
3) աղբի համար նախատեսված վայրերում տեղադրելու անօգտագործելի բժշկական նյութեր, դեղորայք, դեղահաբեր, կաուստիկ թթուներ, ներկանյութեր, մեքենաների յուղեր, ցանկացած տեսակի հեղուկներ, պայթուցիկ նյութեր, այլ վտանգավոր նյութեր և թափոններ,
4) աղբի համար նախատեսված վայրում տեղադրել սատկած կենդանու մարմին:

22. Սատկած կենդանու մարմինը պետք է արագորեն հեռացվի համայնքի առողջապահության պատասխանատուի ցուցումով: Եթե սատկած կենդանու տերը հայտնի է, ապա հեռացումն իրականացվում է նրա կողմից, իսկ եթե տերը հայտնի չէ՝ համայնքապետարանի պահանջով՝ աղբահանություն իրականացնող կազմակերպության կողմից

Հավելված N 2
Ծաղկահովիտ համայնքի ավագանու
2022 թվականի հուլիսի 22-ի N 39 -Ն որոշման

ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ, ԴՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՔԱՆԱԿԸ

Աղբամանների տեղադրման վայրերը	Աղբամանների քանակը	Աղբամանների տեսակները և չափերը
1. Ծաղկահովիտ բնակավայր՝		
Բժշկյան փողոց 4-րդ շենք	2	պլաստմասե՝ 58սմ x 72սմ x 107սմ
Բժշկյան փողոց 5-րդ շենք	2	պլաստմասե՝ 58սմ x 72սմ x 107սմ
Զորավար Անդրանիկի փողոց 6-րդ շենք	2	պլաստմասե՝ 58սմ x 72սմ x 107սմ
Բժշկյան փողոց 7-րդ շենք	2	պլաստմասե՝ 58սմ x 72սմ x 107սմ
Բժշկյան փողոց 8-րդ շենք	2	պլաստմասե՝ 58սմ x 72սմ x 107սմ
Բժշկյան փողոց 9-րդ շենք	2	պլաստմասե՝ 58սմ x 72սմ x 107սմ
Ծաղկահովիտի առողջության կենտրոնի տարածք	2	պլաստմասե՝ 58սմ x 72սմ x 107սմ
ՀՀ ոստիկանության Արագածի բաժնի տարածք	1	պլաստմասե՝ 58սմ x 72սմ x 107սմ
Հոկտեմբերյան փողոց / ՄՄԾ շենք /	1	պլաստմասե՝ 58սմ x 72սմ x 107սմ
Բժշկյան փողոց / դպրոցի տարածք /	1	պլաստմասե՝ 58սմ x 72սմ x 107սմ
Հոկտեմբերյան փողոց 1-ին փակուղի	1	պլաստմասե՝ 58սմ x 72սմ x 107սմ
Գետառի փողոց / ԱԻՆ շենքի բակ /	1	պլաստմասե՝ 58սմ x 72սմ x 107սմ
Զորավար Անդրանիկի փողոց	1	պլաստմասե՝ 58սմ x 72սմ x 107սմ

Հավելված N 3
Ծաղկահովիտ համայնքի ավագանու
2022 թվականի հուլիսի 22-ի N 39 -Ն որոշման

ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ

Համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը	Սանիտարական մաքրմա ենթակա տարածքները	Սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները			Աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման, և վնասազերծման ձևերն ու մեթոդները	Անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները	Սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը
		Ծառայության անվանումը	Չափման միավորը	Ծավալը			
118000մ³	Ընդամենը	Սանիտարա-կան մաքրման տարածքներ	ՔՄ	118000	Աղբահեռացումը իրականացվում է շաբաթական 5 օր	Աղբատար փոխադրամիջոցը ապահովում է աղբի խտացումը, հետնամասում կոնտեյներները ունի բեռնող հիդրավլիկ սարք:	
	1. Ծաղկահովիտ բնակավայր	Բնակավայրի բնակալի թաղամասեր		20000			Հայրենական Մեծ պատերազմի հուշարձան
	2. Նորաշեն բնակավայր	Բնակավայրի բնակալի թաղամասեր		13000			Հայրենական Մեծ պատերազմի հուշարձան
	3. Գեղադիր բնակավայր	Բնակավայրի բնակալի թաղամասեր		10000			Հայրենական Մեծ պատերազմի հուշարձան
	4. Հնաբերդ բնակավայր	Բնակավայրի բնակալի թաղամասեր		18000			Հայրենական Մեծ պատերազմի հուշարձան
	5. Գեղաձոր բնակավայր	Բնակավայրի բնակալի թաղամասեր		12000			Հայրենական Մեծ պատերազմի հուշարձան

	6. Բերքառատ բնակավայր	Բնակավայրի բնակալի թաղամասեր		10000			Հայրենական Մեծ պատերազմի հուշարձան
	7. Վարդաբլուր բնակավայր	Բնակավայրի բնակալի թաղամասեր		8000			Հայրենական Մեծ պատերազմի հուշարձան
	8. Գեղարոտ բնակավայր	Բնակավայրի բնակալի թաղամասեր		9000			Հայրենական Մեծ պատերազմի հուշարձան
	9. Ծիլքար բնակավայր	Բնակավայրի բնակալի թաղամասեր		9000			Հայրենական Մեծ պատերազմի հուշարձան
	10. Լեռնապար բնակավայր	Բնակավայրի բնակալի թաղամասեր		9000			Հայրենական Մեծ պատերազմի հուշարձան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 40-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, Ծաղկահովիտ համայնքի ավագանու կանոնակարգի 23-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1.Ստեղծել Ծաղկահովիտ համայնքի ավագանու մշտական գործող թվով չորս հանձնաժողովներ և հաստատել դրանց անհատական կազմը՝

ա) Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի հանձնաժողով.
1. Միշա Մխիթարյան – հանձնաժողովի նախագահ
2. Կարեն Գարեգինյան - հանձնաժողովի անդամ
3. Վաչիկ Պողոսյան - հանձնաժողովի անդամ
4. Մանուկ Նիկողոսյան- հանձնաժողովի անդամ

բ) Սոցիալական, առողջապահության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողով.

1.Արմեն Սարգսյան - հանձնաժողովի նախագահ
2. Սևակ Մուրադյան - հանձնաժողովի անդամ
3. Արամ Խաչատրյան- հանձնաժողովի անդամ
4.Էդգար Հակոբյան- հանձնաժողովի անդամ

գ) Ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական զարգացման և իրավական հարցերի մշտական հանձնաժողով.

1. Արամ Խաչատրյան - հանձնաժողովի նախագահ
2.Մանուկ Նիկողոսյան- հանձնաժողովի անդամ
3.Կարեն Գարեգինյան- հանձնաժողովի անդամ
4. Միշա Մխիթարյան- հանձնաժողովի անդամ

դ) Ենթակառուցվածքներին առընչվող հարցերի մշտական հանձնաժողով.

1. Սևակ Մուրադյան – հանձնաժողովի նախագահ
2. Վաչիկ Պողոսյան - հանձնաժողովի անդամ
3. Էդգար Հակոբյան - հանձնաժողովի անդամ
4. Արմեն Սարգսյան- հանձնաժողովի անդամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՆՈՐԱՅՈՒ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 41-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ՄԱՑԱԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ ԵՎ ԳԵՎՈՐԳ ՍՄԲԱՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ, 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով ավագանու անդամներ՝ Մացակ Սողոմոնյանի և Գևորգ Հովհաննիսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը , **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու անդամներ՝ Մացակ Անդրանիկի Սողոմոնյանի և Գևորգ Սմբատի Հովհաննիսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -0 Դեմ -5 Ձեռնպահ -1

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ